ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
Ն-35

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
24 Մարտի 2021թ.

№ Ն-35 (Հ-35) 2021

Ուժի մեջ է մինչև 3 Դեկտեմբերի 2023թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին (Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 24-ի N 222-Ա հրաման):

ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Պ. Տիչինայի փող, 42

Էլ. հասցե: tex_anvtangutyun@mail.ru, Հեռ./ֆաքս: (+374 77) 73-93-33, (+374 10) 73-93-33

«Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերը՝

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգեր

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի «Ամբարձիչ աշտարակների (վերհանների) կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1449-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «8426» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի «Շոգու՝ մինչև 0,07ՄՊա ճնշման շոգեկաթսաների, ջրի՝ մինչև 388Կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1083-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «7309», «7310», «7311», «7305» և «7306» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի «Շարժասանդուղքների կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 478-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «8428» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի «Ճոպանուղիների շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1160-Ն որոշում (միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «8428» և «7312» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք).

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգեր

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 823 որոշմամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 010/2011),

2. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 824 որոշմամբ հաստատված «Վերելակների անվտանգություն» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 011/2011),

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հուլիսի 2-ի N 41 որոշմամբ հաստատված «Հավելյալ ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 032/2013),

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 16-ի N 114 որոշմամբ հաստատված «Ատրակցիոնների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 038/2016):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ՝
Կ.Տ.

(ստորագրություն)